ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳՆԵԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՃԵՐԵՃՅԱՆԻՆ՝ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ 63-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱՒՈՐՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳՆԵԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՃԷՐԷՃԵԱՆ, ՈՐ Ի ԴԱՄԱՍԿՈՍ, ՍԻՐԻԱ

Առաքելական մեր Մայր Եկեղեցին յաւերժում է իր նուիրեալ ու ջանադիր սպասաւորներով, որոնք փարիների անխոնջ ծառայութեամբ մեր Սրբազան Եկեղեցու հաւատոյ կանթեղը անմար են պահել եւ մեր ժողովրդի զաւակաց մտքերն ու հոգիները լուսաւորել են Աւետարանի սիրով:

Սիրելի Սրբազան.

Հոգու մեծ բերկրանքով տեղեկացանք Դամասկոսի թեմի Ազգային Քաղաքական Ժողովի վարչութիւնից, որ բոլորում էք Ձեր քահանայական ձեռնադրութեան 63-րդ ամեակը, փարիներ, որոնց ընթացքում ուխտապահութեամբ ու նուիրումով Տիրոջ և մեր ժողովրդի զոհասեղանին էք ընծայաբերել Ձեր կեանքը:

Ցիրաւի, քահանայական Ձեր անսակարկ սպասաւորութեան արդիւնաւոր տարիները՝ ամենախոնարհ աստիճանից մինչեւ արքեպիսկոպոսութիւն, օրհնութիւն եղան մեր Եկեղեցու՝ ի մասնաւորի Լիբանանի ու Սուրիոյ հաւատաւոր հայորդաց համար:

Ուրախ ենք արձանագրելու, որ Սրբալոյս Միւռոնը, որպէս «մաքուր կաթն անարատ ստեանց Մօրն Լուսոյ Սրբոյ Էջմիածնի»,- ինչպէս ասում է Սիմէօն Երեւանցի Հայրապետը, երիցս պսակել է Ձեր ճակատը իբրեւ Քրիստոսի և Եկեղեցու քաջարի զինուորի՝ շնորհընկալը դարձնելով Ձեզ հաւատաւոր մեր զաւակաց հայրենակարօտ հայեացքները Լուսաւորչեան մշտավառ կանթեղին գամելու:

Հոգեւոր ոգորումներով հարուստ Ձեր սպասաւորութեան 63-րդ տարեդարձի այս առիթով որպէս «ծառայ բարի եւ հաւատարիմ», իրաւամբ կարող էք արտայայտուել

Պօղոս առաքեալի խօսքերով. «Բարւօք պատերազմն պատերազմեցայ եւ եկի առնուլ զպսակն»:

Առաքելական Մայր Եկեղեցուն բերած բոլորանուէր Ձեր ծառայութեան բարձր գնահատանքով՝ Լուսոյ Խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու ջերմ բարեմաղթանքները:

Աղօթում ենք առ Բարին Աստուած, որպէսզի Տէրն Ամենակալ պարգեւի Ձեզ «յամայն ամս ուղիղ վարդապետութեամբ եւ անարատ վարուք» առաջնորդել մեր ժողովրդին իր բարի երազների լուսեղէն հանգրուանները:

Շնորք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ընդ ամենեսեանդ. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան
ի 20 մարտի
յամի Տեառն 2000
եւ ի թուին Հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ 17